# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

№ ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ-ԾՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36

ք. Երևան «31» հունվարի 2014թ.

***ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության և « ՎԵԲ » ՍՊԸ-ի միջև 2013 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված № ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ-ԾՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36 ծառայությունների գնման պայմանագիրն ուժի մեջ մտնելու մասին***

---

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Աբրահամյանի, որը գործում է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) և «ՎԵԲ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Տոնեյանի (այսուհետև՝ Կատարող), (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածով և «28» դեկտեմբերի 2013թ. կնքված № ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ-ԾՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36 ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 և 7.3 կետերով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 31-ից:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է № ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ-ԾՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36 ծառայությունների գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն | << ՎԵԲ >> ՍՊԸ |
| ք. Երևան, Հր.Քոչար 4 | ք. Երևան, Սոսեի 2-րդ նրբ. 8/22 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | <<Կոնվերսբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011500049 | Հ/Հ 1930000492570100 |
| ՀՎ ՀՀ 00259325 | ՀՎՀՀ 00027623 |
| Աշխատակազմի ղեկավար | Տնօրեն |
| ---------------- Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | ---------------- Ա. ՏՈՆԵՅԱՆ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | |

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ /ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ/ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

*Թիվ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36*

ք. Երևան 28. 12. 2013թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը, ՊԿՀ-ն, ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Համբարձում Աբրահամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << ՎԵԲ >> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա.Տոնեյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը ստանձնում է համացանցային / ինտերնետային կապի տրամադրման / ծառայությունների մատուցման պարտավորություն (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Ծառայության մատուցման ժամկետն է՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2014 թվականի փետրվարի 18-ից մինչև 2015 թվականի փետրվարի 18-ը, իսկ ծառայության դիմաց վճարումը՝ մինչև 2015 թվականի փետրվարի 18-ը:

1.3 Պայմանագիրն ուժի մեջ կմտնի համապատասխան ֆինանսական միջոցներ լինելու դեպքում, որի ժամանակ էլ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության ընդհանուր գինը կազմում է 180000 /մեկ հարյուր ութսնասուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում: Եթե ընդունված ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի

գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտա-կարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*7.1* Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմա-նագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմա-նագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և պահից և գործում մինչև պայմանագրով Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ընդ որում,պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է - 9 - էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն
ք. Երևան, Հր.Քոչար 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011500049
ՀՎ ՀՀ 00259325

Աշխատակազմի ղեկավար ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

<< ՎԵԲ >> ՍՊԸ
ք. Երևան, Սոսեի 2-րդ նրբ. 8/22
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623

Տնօրեն Ա.ՏՈՆԵՅԱՆ

Հավելված 1
<< 28>> 12. 2013թ.
N ՅՅ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36
գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմ – ք. Երևան, Հր. Քոչար 4 - մինիմում 5Մբիթ/վրկ

***Վերը նշված հասցեներում անհրաժեշտ է ապահովել «Տեխնիկական բնութագիր 1»- ին համապատասխան համացանցային /ինտերնետային կապի/ ծառայություններ**

<table>
<tr><th>N</th><th>Տեխնիկական բնութագրերի տարրերը</th><th colspan="4">Նկարագրությունը</th></tr>
<tr><td>1</td><td>2</td><td colspan="4">3</td></tr>
<tr><td>1</td><td>Համացանցային /ինտերնետային կապի/ծառայության տեսակը</td><td colspan="4">Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով</td></tr>
<tr><td rowspan="3">2</td><td rowspan="3">Համացանցային /ինտերնետային կապի/ծառայության միացման նախապայմանները</td><td colspan="4">Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում</td></tr>
<tr><td colspan="4">Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում (Երևան քաղաքի չափաբաժնով Կատարողի հաշվին)</td></tr>
<tr><td colspan="4">Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային մալուխի անցկացում մինչև օգտվողի կողմից նշված կետը (Երևանի չափաբաժնով Կատարողի հաշվին)</td></tr>
<tr><td>3</td><td>Տվյալների փոխանցում (երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև)</td><td colspan="4">Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով՝ մինիմում 5Մբիթ/վ արտաքին աշխարհ, 100Մբիթ/վ հայկական տիրույթ</td></tr>
<tr><td rowspan="2">4</td><td rowspan="2">Համացանցային /ինտերնետային կապի/ծառայության սպասարկման նախապայմանները</td><td rowspan="2">Օպտիկամանրաթելային մալուխով</td><td>Ըստ կապի պատվիրված արագության</td><td>Երաշխավորված երկկողմանի սիմետրիկ արագություն</td><td>Անսահմանափակ</td></tr>
<tr><td>*</td><td>*</td><td>*</td></tr>
<tr><td rowspan="9">5</td><td rowspan="9">Այլ պահանջներ</td><td colspan="4">Անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում</td></tr>
<tr><td colspan="4">Սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն անհրաժեշտության դեպքում</td></tr>
<tr><td colspan="4">Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում</td></tr>
<tr><td colspan="4">Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն</td></tr>
<tr><td colspan="4">Ծառայության հետ կապված ծրագրային ապահովում</td></tr>
<tr><td colspan="4">Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով)</td></tr>
<tr><td colspan="4">Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում՝ վարձակալության հիմունքով</td></tr>
<tr><td colspan="4">Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում ՝ըստ պահանջի</td></tr>
<tr><td colspan="4">Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուին</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 6 | Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ծառայությունններ՝ կապված համացանցային /ինտերնետային կապի/ծառայության հետ | Ցանցային անվտանգության սարքի վարձակալություն (Firewall) |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն

ք. Երևան, Հր.Քոչար 4

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011500049

ՀՎՀՀ 00259325

Աշխատակազմի ղեկավար [illegible]ՀԱՄՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

<< ՎԵԲ >> ՍՊԸ

ք. Երևան, Սոսեի 2-րդ նրբ. 8/22

<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ

Հ/Հ 1930000492570100

ՀՎՀՀ 00027623

Տնօրեն ____________ Ա.ՏՈՆԵՅԱՆ

Հավելված N2

*28. 12. 2013թ. . կնքված*

*N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ - ԾՀԾՁԲ-11/1- 5 -10.09.01/02 գնման պայմանագրի*

## Գնման ժամանակացույց

*Հազար ՀՀ դրամ*

| N/N | Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների | | | Նախատեսվում է գնել 2014թ. ընթացքում | | | | | | | | Ընդամենը | | Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չ/մ | | I եռ. | | II եռ. | | III եռ. | | IV եռ. | | | | I եռ. | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | 13 | 14 | 15 | 16 |
| | ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմի կարիքների համար | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Ինտերնետային կապի տրամադրում | դրամ | 180.0 | 1 | 22.0 | 1 | 45.0 | 1 | 45.0 | 1 | 45.0 | 1 | *157.0* | 1 | 23.0 | 1 | *23.0* |
| | Ընդամենը | | | | | | | | | | | | *157.0* | | 23.0 | | *23.0* |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն | << ՎԵԲ >> ՍՊԸ |
| ք.Երևան, Հր.Քոչար 4 | ք. Երևան, Սոսեի 2-րդ նրբ. 8/22 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | <<Կոնվերսբանկ>> ՓԲԸ |
| ՀՀ 900011500049 | Հ/Հ 1930000492570100 |
| ՀՎՀՀ 00259325 | ՀՎՀՀ 00027623 |
| Աշխատակազմի ղեկավար ______ ՄՈՒՇԱՀԱՄՅԱՆ | Տնօրեն ______ Ա.ՏՈՆԵՅԱՆ |

(կնիք) «ՎԵԲ» «ВЕБ» «WEB» 00027623

Հավելված N3

<< 28 >> 12. 2013թ. *կնքված*

**N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ -ՇՀԾՁԲ-11/1- 5 -10.09.01/02 գնման պայմանագրի**

# Վճարման ժամանակացույց

*Հազար 22 դրամ*

| N / N | ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝ | | | | | | | | | | | Ընդամենը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2015 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝ | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *փետրվ* | *մարտ* | *ապրիլ* | *մայիս* | *հունիս* | *հուլիս* | *օգոստ.* | *սեպտ.* | *հոկտ.* | *նոյեմբ.* | *դեկտ.* | | *հունվ.* | *փետրվ.* | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* | *11* | *12* | *13* | *14* | *15* | *16* | *17* |
| *1* | Ինտերնետային կապի տրամադրում | *7,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *15,0* | *157,0* | *15,0* | *8.0* | *23.0* |
| | | | | | | | | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 157.0 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | *23.0* |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն**

Հասցե՝ ք.Երևան, Հր. Քոչարի 4

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011500049

ՀՎՀՀ 00259325

Աշխատակազմի ղեկավար ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

**<< ՎԵԲ >> ՍՊԸ**

ք. Երևան, Սոսեի 2-րդ նրբ. 8/22

«Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 193000049257O100

ՀՎՀՀ 00027623

Տնօրեն Ա.ՏՈՆՅԱՆ

Հավելված N 4
<< 28 >> 12. 2013թ. կնքված
N ՅՅ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36 պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն
ք. Երևան, Հր.Քոչար 4
ՀՀ ֆն գործառնական վարչություն
Հ/Հ 900011500049
ՀՎ ՀՀ 00259325

**ԿԱՏԱՐՈՂ**
<< ՎԵԲ >> ՍՊԸ
ք. Երևան, Սոսեի 2-րդ նրբ. 8/22
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> << >> 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ Համացանցային /ինտերնետային կապի տրամադրման / ծառայություններ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<28>> << 12 >> 2013թ.
Պայմանագրի համարը՝ N ՅՅ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԾՁԲ-11/1-5-10.09.01/36
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմի ղեկավար Հ. Աբրահամյանի, և Կատարողն՝ << ՎԵԲ >> ՍՊԸ ի դեմս տնօրեն Ա.Տոնեյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողն <<18>> <<02>> 2014թ-ից մինչև <<18>> <<02>> 2015թ-ը ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Մատակարարման վերջնաժամկետը | Վճարման ենթակա գումարը /ՀՀ դրամ/ | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| Համացանցային /ինտերնետային կապի տրամադրման / ծառայություններ | 1 | 18.02.2015թ. | 180000 | 18.02.2015 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 1 | | **180000** | |

Ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքները հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ծառայությունը մատուցեց

______________________
(ստորագրություն)

ազգանուն______________
Կ.Տ

Ծառայությունը ընդունեց

______________________
(ստորագրություն)

ազգանուն ______________
Կ.Տ